ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22310, amasia.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 86-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի՝ սույն թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Մեղրաշատ բնակավայրում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձնաբքի դեպքում» թեմայով և ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով.

որոշում եմ

1. Նշանակել՝
Ոսումնավարժության ղեկավարի տեղակալ- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արտավազդ Ղուկասյան
Ուսումնավարժության արդյունքների ամփոփման խմբի պետ-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար՝ Սամվել Էգնատոսյան

2.Ուսումնավարժությունում ընդգրկվել՝
տարահանման հանձնաժողովին, կազմավորումների ղեկավարներին

3. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝
1) մշակել և մինչև 2018 թվականի նոյեմբերի 5-ը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,
2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը,

3) ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 2018 թվականի նոյեմբերի 7-ը

4.Ուսումնավարժության մասնակիցներին՝
պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին

5.Սույն որոշումը ծանոթացնել ուսումնավարժության մասնակիցներին:

6.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 18 թ. հոկտեմբերի 18

գյուղ Ամասիա